

Որոշ կերպով չի գիտցուի, թէ Լեւոն ի՛նչ կեանք վարեց Մազրիդի, Վիլլարէալի եւ Անդուխարի տանուաւորութեան ժամանակ . միայն սա չափ գիտենք, որ Լեւոն նիւթական յիշատակ մը ձգեց Մազրիդի մէջ՝ նորոգել տալով Արքայական Պալատին աշտարակները, որոնք իրենց հնութեան պատճառով մնասուած էին (1) :

Կերեւի թէ Լեւոնի համար մեծ կարեւորութիւն չունէր օտար երկրի մը մէջ « տանուտէր » ըլլալը : Եւ շատ բնական կը գտնեմ, որ Հայոց թագաւորն իր թագը չփոխէր Մազրիդի, Վիլլարէալի եւ Անդուխարի տանուաւորութեան հետ : Ուստի՝ զարմանալու չէ երբ տեսնենք որ Լեւոն, արքայական մականի տեղ՝ դարձեալ իր թափառականի ցուպը ձեռք կառնէ եւ դռնէ դուռ կը պտրտի, իր կորուսած փառքն ու պատուութիւնը վերստին ձեռք բերելու համար : Եւ իրօք՝ 1384 թ. փետրվ. ամսի վերջին օրը, երբ հազիւ չորս ամիս անցած էր իր Մազրիդի եւնի տանուտէր կոչուելէն ի վեր, Լեւոն կը հեռանայ Կաստիլյայէ, կը դիմէ Նավարրայի Կարոլոս Բ թագաւորին (1349—1387), որ մինչեւ Պերալտա կը դիմաւորէ եւ մեծամեծ պատիւներով կընդունի զայն(2) :

Նավարրայի թագաւորն ա՛յնքան զգածուեցաւ Լեւոնի պատմածներէն, որ անմիջապէս հրամայեց տալ Հայոց թագաւորին՝ հարիւր զօրական ու հարիւր ազեղնաւոր, հանդերձ իրենց թոշակներով, որպէս զի Լեւոն կարենայ Հայաստան երթալ եւ փրկել իր երկիրն անհաւասաներու ձեռքէն : Իսկ Լեւոնի նուիրեց ոսկեզօծ արծաթէ գեղաքանդակ նաւ մը, մէջը դնելով 2000 արագոնեան ֆլորին :

(1) G. de Quintana, *Historia de la antigüedad ... de Madrid*, քղ. 317 ք : Այսպէս կրտսե նաեւ Gil Gonzalez Dauila, *Teatro de las grandezas de la villa de Madrid*, եր. 156 : Սակայն ուրիշ պատմիչներ կրտսեն, քի Մազրիդի Արխայական Պալատն արդէն կործանած էր այն պատերազմներու երեսէն՝ զորս մղած էր Տրանսալպարէի կոմս Ենրիկ (Էսֆէն՝ Ենրիկ Բ, քաղաւոր Կաստիլյայի, 1368—1379) իր անհարազատ եղբօր՝ Կաստիլյայի Պետրոս քաղաւորին (1350—1369) դէմ . իսկ նորոգած են զայն Ենրիկ Գ (1390—1406) եւ Գերմանիայի կայսր ու Սպանիայի քաղաւոր (1516—1558) Կարոլոս Ե : Հիմա այդ հին պալատէն հետք մը անգամ չի մնացած . 1734-ին պատահած հրդեհն մը բոլորովին լափած ոչնչացուցած է զայն :

(2) Luis Գարդելի, եր. 195 . իսկ ուրիշ պատմիչ մը (Jose Yanguas y Miranda, *Diccionario de ... Navarra*, հս. Գ, եր. 131) կրտսե քի Լեւոն 1383 արւոյ մեջ, նոյեմբ. 21-է հտ այցելած է Կարոլոս Բ-ին :